

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԽԼՂԱԹՅԱՆԻ 20015 ԹՎԱԿԱՆԻ
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի հյուրեր, ավագանու անդամներ, համագյուղացիներ.

2015 թվականի Առաջին կիսամյակի ընթացքում Տարոնիկ համայնքում
իրականացվել են

աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են եղել համայնքի սոցիալ-
տնտեսական զարգացմանը և համայնքի բնակիչների կենսամակարդակի
բարձրացմանը:

2015 թվականի ընթացքում Տարոնիկի գյուղապետարանը իրականացնելով
Հայաստանի Հանրապետության կառավարության, Արմավիրի մարզպետարանի,
ինչպես նաև համայնքի ավագանու կողմից ընդունած որոշումները զգալի
աշխատանքներ է իրականացրել համայնքի առջև դրված խնդիրների բարեհաջող
լուծման համար: Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է բնակչության
կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման հարցերը: Համայնքի
փողոցներում ամենօրյա գրաֆիկով կազմակերպվում է աղբահանություն
պահպանելով համայնքի սանիտարահիգիենիկ նորմերը: 2015 թվականի ընթացքում
կազմակերպվել և անցկացվել են Բանակի տոնին, Մարտի 8-ին և Եղեռնին
նվիրված միջոցառումներ:

Մարտի 8-ի կապակցությամբ գյուղապետարանի, դպրոցի և մանկապարտեզի
բոլոր կին աշխատողներին հանձնվել են նվերներ և ծաղկեփնջեր:

Բոլորիս համար ավանդույթ դարձած վերջին զանգի առթիվ ինչպես անցած
տարիների ընթացքում ,այնպես էլ այս տարի մեր շրջանավարտները և
ուսուցիչները եղան գյուղապետարանի ուշադրության կենտրոնում՝ նրանց համար
կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ ավարտական երեկո , էքսկուրսիա
Հայաստանի տեսարժան վայրեր: Հունիսի 1-ին Երեխաների Պաշտպանության

Միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում համայնքի բոլոր փոքր երեխաների մասնակցությամբ:

- Համայնքի ղեկավարի մոտ կազմակերպվում է ամենօրյա ընդունելություն:
- 20015թվականի ընթացքում համայնքի ավագանու կողմից կայացել է թվով չորս նիստ, որոնց որոշումները հաստատվել են առանց առարկումների:
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 14 որոշում և արձակվել է 5 կարգադրություն:
- Համայնքի բնակչությանը գյուղապետարանի կողմից տրամադրվել է թվով 395 բազմաբնույթ տեղեկանքներ:
- Ստացվել է 61 պաշտոնական գրություն, որոնք քննարկվել են և պատասխանվել ըստ կարգի:
- Գյուղապետարանից ուղարկվել է 63 պաշտոնական գրություն:
- Ստացվել է 32 դիմում, որոնք քննարկվել են և ստացել համապատասխան լուծում:
- Պարբերաբար կազմակերպվում է համայնքի հանրային սննդի և առևտրային կետերում ստուգումներ, որոնք համապատասխան եզրակացություններով, կից գրությունով ամեն եռամսյակ ուղղարկվում է մարզպետարան:
- Համայնքի ղեկավարին է դիմել համայնքի բնակչության մեծ մասը տարբեր կենցաղ կոմունալ հարցերով և ստացել բավարար պատասխաններ իրենց հուզող հարցերի շուրջ:
- Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 19 անձից որոնցից ութը համայնքային ծառայողներ են, մեկը համայնքի ղեկավարի տեղակալ, պայմանագրային և տեխնիկական աշխատողներ:
- Գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզը 2014թ. չի գործում շենքի վթարային լինելու պատճառով:
- Համայնքը ունի գրադարան 4290 կտոր գրականություն, որից օգտվել են 210 ընթերցողներ:

Ֆինանսական բաժին – 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վճարվել է 8597.0 հզ դրամ աշխատավարձ:

Համայնքի առավել անապահով բնակիչներին տրամադրվել է սոց. օգնություն 2000.0 հզ դրամ: Սպորտ և երիտասարդական ծրագրեր հողվածից ծախսվել է 2000.0 հզ դրամ:

Կատարվել են այլ ծախսեր ապարատի պահպանման, ապրանքների գնման և ծառայությունների ձեռք բերման համար 1169.4 հզ դրամի չափով:

2015թվականի համար հողի հարկը նախատեսվել է 4500.0 հզ դրամ, որից հավաքագրվել է 1519.0 հզ դրամ, գույքահարկը նախատեսվել է 2200.0 հզ դրամ որից հավաքագրվել է 2412,1 հզ դրամ՝ վարձակալական հողի հարկը նախատեսվել է 200.0 հզ դրամ, որից հավաքագրվել է 2.7 հզ դրամ: